

ԶԱՅՆԱԳԻՐ ԿԱՄ ԽՕՍՈՒՆ ԳՈՐԾԻ

Հրաշալիքէ հրաշալիք կը դիմենք : Քանի մը ամիս առաջ մինչդեռ ամենուն միտքը զրաւեր էին հեռախօս դործին , հեռելեկտրացոյց դործին , լրադրաց մէջ կարգացինք ալ աւելի զարմանալի գիւտ մը . այն է դործի մը , որ իր մէջը կ'ամբարէ զայնը : Նիւծուոքի օրագիր մ'առաջինն եղաւ այս լուրը տալու , և այնպիսի արտառոց կերպով հրատարակեց զայն՝ մինչեւ կարծել տուաւ թէ մոտացածին գիւտ մ'ըլլայ , ինչպէս որ առատ են այսպիսի ինքնաստեղծ լրովք ամերիկացի օրագիրը :

Արդ կ'երևայ թէ այս անգամ ամերիկացի օրագիրն իրաւունք ունի եղեր , ըստածը չափազանցութիւն չէր , գիւտն ստոյդ է . այն հրաշալիք դործին դցութիւն ունի , և կ'ըսուի ձայնազիր (phonographie) : Այս մարտի մէջ բարիդու գիտութեանց ձեմարանին առջնի հանդէս եղաւ , և ամենուն զարմանքը շարժեց : Ականատես վկայէ մը քաղելով հետևեալն է այս դործւյն պատմութիւնը :

Անցեալ երկուշաբթի , գիտութեանց ձեմարանին գումարման ժամանակ , կոմն տիւ Մոնսէլ (du Moncel) ներկայացուց կաճառորդաց առջն խօսուն մեքենայն , Էտիսոն (Edison) ամերիկացւյն ձայնագիրն , որ այն ինչ հասեր էր ՚ի Գաղղիա , և իրաւցունէ մերժամանակաց քան զամենն աւելի հետաքրքրաշարժ առարկայն կրնայ ըլլալ :

Այս ձայնագիր մեքենայն այնպիսի դործի մ'է , որ կը լսէ , կ'արձանագրէ խօսակցութիւնը , և ետքն ըստ կամն կ'արտադրէ զայն քանի անգամ մարդուզէ , նոյն ձայնին աստիճանաւը , կ'արտասանէ զայն և խօսակցողաց խօսքն ամենայն մանրամասնութեամբը կ'արտաքրէ : Վերջապէս հրաշալիք մ'է : Եւ տուած արդիւնքն այնպիսի ար-

տափոյ կարդի բաներ են , որ առաջի բերան ումանք սկսան տարակուսիլ , և հարցունել թէ այն բնագէտներն որոնք լսեր էին այս դործւյն խօսիլը , չըլլայ որ խարուած ըլլան . իսկ հիմա ալ տարակոյս շմաց : Ճեմարանը գտնուող ամենքը տեսան ու լսեցին այս հրաշալիքներնայն , որ մօտալուա արուեստահանն դիսին մէջ ամենէն զարմանալի գիւտից կարգը պիտի անցնի :

Դիտութեանց ձեմարանին մէջ այս գործին ատեանին առջն փաքրիկ սեղանի մը վրայ գրուած էր . մեծութեամբն հաղին թէ երգեհոն սնտուկի մը չափ կար . մէդր մը երկայն և քսան հարիւրորդամէդր լայն : Տիւ Մոնսէլ կոմնին ինդրանոգ կախունին օգնական սեղանին դիմացը նստաւ . և մօտենալով գործւյն ձայնատար փողին որոշ որոշ արտասանեց հետեւեալ տողերը . « Ձայնագիրն իրեն մեծ պատիւ կը համարի ներկայանալն ձեմարանին զիտութեանց » :

Ամենքը լսեցին . օգնականը ձայնատար փողին մէջ մոռուց լսողական մեծ փող մը խաւաքարտէ (մորգավշա) և գործին շարժման մէջ դրաւ : Յանկարծ մեծ զարմացմամբ ժողովականաց լսուեցաւ ձայնագիր դործին , որ կը կրկնէր յստակ ձայնով , քիչ մը ուղնդային , բայց որոշ . « Ձայնագիրն իրեն մեծ պատիւ կը համարի ներկայանալն ձեմարանին զիտութեանց » :

Բոլոր հանդիսականք միաբան ծափահարեցին :

Էտիսոնի օգնականն ամերիկացի է , շատ լաւ գաղղիերէն կը խօսի , բայց քիչ մը կոկորդաձայն է : Մեքենայն զարմանալի հաւատարմութեամբ արտադրեց նաև այս կոկորդաձայնութիւն : Նմանութիւնն այնպիսի ճշդութեամբ էր , որ կաճառորդաց մէկն որ շատ դիւրահաւան չէր , չկրցաւ . համբերել ու

փախսաց . և Բայց անկարելի է , մեքենայն այս բանիս մէջ ամեննեին մասն չունի . որովհանախօս մ'է որ այսպիսի ձայն կը հանէ :

Տիւ Մոնսէլ կոմին աղաչեցին որ ինքն անցնի օդնականին տեղը , և այն մեքենայով մէյմ'ալ ինքը փորձէ : « Շնորհակալ ենք Պ . էտիսոնին , ըստ կոմնն տիւ Մոնսէլ , որ զրկեց մեզի իր ձայնագիրը » :

Թէպէտ և տիւ Մոնսէլ կոմնն այս բառերս արտասանելու ժամանակ բաւական հեռու կեցած էր ձայնատար փողին բերնէն , ՚ի վերայ այսր ամենայնի երբ մեքենայն սկսաւ շարժիլ , ձեմարանը կարող եղաւ լու որոշել բառերն որ խօսուն մեքենայն հաւատարմարար կը կրկնէր :

Մէկենայէն ելած ձայնն յայտնի է թէ այլայլած կ'ըլլայ , խօսողին ձայնը շրյար , աւելի տկար , աւելի նիհար ու մետաղական կ'ըլլայ . բայց գրեթէ ձայնին կատարեալ պատկերն է , լուսագրութիւն մ'է , վերածուածն է , արտաբերութեան ամենայն մսմնաւորութեամբն ու ամենայն թերութիւններովը : Խելքէ ու մարէ գորսր բան մը կ'երևայ լսել փարբիկ գործի մը որ կը կրկնէ քանի մը վայրիկեան առաջ արտասանուած ու արձանագրուած խօսակցութիւն մը : Մարդուն հաւատալը չգար , կատակ կը կարծէ . իբր թէ հանգիստականաց մէջէն մէկն ամիսովելով ձայնը՝ կը կրկնէր եղած խօսակցութիւնը :

Եւ սակայն գործին այնպէս պարզ է մտածութեամբն ու կազմութեամբն , որ յետ տեսնելու զայն բնագէտ մը չզարմանար անոր տուած հրաշալի արդեանցը վրայ : Մէկենայն այնպէս պարզ է , որ մարդուս զարմանքը կու գայ թէ ինչպէս մինչեւ հիմայ չէ մտածուած անոր գիւտը :

Թրթուուն թաղանթ մը , նման հեռախօս գործւյն թաղանթին , բերանի մը յատակը դրուած է : Այս թաղանթին մէջ տեղը պար մը կայ , որ կ'երթայ կը հանդի հորիզոնական անուակի մը

վրայ . այս անուակը պղընձէ զլան մ'է , 20 հարիւրորդամէդը երկայնութեամբն Այն անուակը կը յենու երկու յենարանաց վրայ , խողովակաց առանցքի մը միջնորդութեամբը կը շարժի : Եւ երբ ունելիքով մը առանցքը կը դառնայ , պտտտակի նման կը յառաջէ ներքսակողմը , գանդաղ ու կամոննաւոր շարժմամբ կը տանի հետն այն գլանը , և միանգամայն կը թաւալէ զայն ինքն իր վրայ :

Դիւրին է ըմբռնելն որ երբ պաքի մը ծայրն անուակի մը վրայ կը հանդի , որ շարժման մէջ ըլլայ ու միանգամայն տեղը փոխէ , մակերեսութիւնն վրայ պարուրածն մը կրգծէ . ուստի թրթացողթաղանթին մէջ տեղն հաստատուած ալարքը՝ անագէ թերթի մը վրայ , որ այն անուակին մակերեսոյթը կը կազմէ , պարուրածն ակօս մը կը գծէ : — Երրորդ կը խօսուի , թաղանթին թրթը ունենաք կը հաղորդեն իրենց շարժմուն . քը սլաքին վրայ , որ կ'երթայ ու կուգայ աւելի կամնուազ երագութեամբ , և կը տպաւորէ պարուրածէին երկայնութեամբն այլ և այլ կէտեր , աւելի կամ նուազ ուժով անագին մակերեսութիւնն վրայ : Այս կէտերը կը կազմեն ստոյդ գրութիւնն մը ամեն մէկ արտասանուած բառերուն , իբր թէ անագին վրայ նշանակուած խաղերը ըլլային : Երրոր կ'ուզեն որ այս գործին վրայի գրութիւնը կարգայ , ձայները կրկնէ , բաւական է պտըտցունել ունելիքը , և դարձունել անուակը այն պտուտակին միջնորդութեամբն ու բերել իր առաջին կէտը . ետքն սկսիլ նորէն դարձունել անուակն , ինչպէս եղաւ երբ գործին կ'արձանագրէր խօսակցութիւնը : Սլաքը կը մտնէ նորէն իր գծած ակօս ներուն մէջ , զարձեալ կ'անցնի փոքրիկ անհարժութեանց ու փոսերուն վրայէն , զորութաղանթը թրթալու ժամանակակի բէր զնիքը գծել ա . նագէ թերթին վրայ . բայց հետեւով իր գծագրութեանցը , սախուած է մերթ հեռանալու , մերթ մերձենալու անուակին , և որովհետեւ այն սլաքը բո-

լորովին կապեալ է թաղանթին հետ, անոր համար պէտք է որ թաղանթը հեռանայ իր առաջին դիրքէն կամ առնու առաջին դիրքը, ևստ որում պաքը վեր կամ վար կ'երթայ : Ասով թաղանթը կը թրթուայ, և իր թրթումոնքը կ'ըլլան ճիշդ կրկնութիւն այն թրթը բումանց որ տպաւրեցին անազին վրայ վլաքին նկարած ուրուագծերն : Ամեն մէկ ձայնը կը կրկնուի, ամեն մէկ խօսքը կ'արտաքերուի, իրենց որոշիչ որպիսով թթեամբը՝ բարձրութեան, ելեւ ջութեան և աստիճանին :

Այս գործին կրկին պաշտօն ունի : Պտտաւակը դառնալով կը խօսի, խօսակցութիւնը կը գրուի : Խօսքը գրելով՝ կը լինցունէ իր մասը : Խօսքը նշանակուեցաւ, ալ ուրիշ բան չմնար բայց եթէ վերցունել անազի թերթը ու տանել պահել : Ետքն որովհետև շատ դիւրին չէ կարդալ այն արձանագրուած գրութիւնը, ուստի երբ պէտք ըլլայ գիտնալ թէ ինչ էր այն գրուածքը, փոխանակ կարդալու զայն . կը գրուի այն անազէ թերթը գործույն վրայ, որ հիմա խօսուն պաշտօն կ'առնու, և ձայնով կը թարգմանէ այն գրութիւնը, կը կրկնէ եղած խօսակցութիւնը : Այսպէս յետ մտիկ ընելու և համասուսադրելու, հրաման տրուածին պէս կը սկսի խօսիլ :

Ինչպէս կը տեսնուի, այս գործին իր կազմութեամբը տեսակ մը նմանութիւնի երածշտական տփոց և երգահան արկեղաց, որոնց մէջ խազերը նշանակուած են անուակի մը վրայ փոքրիկ անհարժութեանց միջնորդութեամբը, իսկ այս տեղ գործին ինքն իրեն կը պատրաստէ իր անուակը, և ինքնաշարժութեամբ իր գործը կը կատարէ :

Հեռախօս գործին կը մեղադրուէր թէ խօսից հետք մը չփողուր . բառք բոյին, ուրեա ուրած . ձայնագիր գործին մտիկ կ'ընէ, կ'արձանագրէ ու կը կրկնէ խօսքը . գրուածք մնան, scripta manent . Անշուշտ այս գործին մեծ ծառայութիւններ պիտի մատուցանէ հեռագրութեան :

Բարիզու գիտութեանց ձեմարանին ներկայացուած ձայնագիր գործին Ամերիկային եկեր էր շոգենաւով, որուն մէջ բազմաթիւ նաւորդներ կային, որոնք ճանապարհորդութեան ճանձրոյթն այս գործւով կը փարատէին, առաւօտուընէ մինչև իրիկուն խօսեցունել տալով զայն : Ճամբայ ելեւէն առաջ Նիւ-թօռքի մէջ լած բողոր խօսակցութիւնները կը կրկնէր, այնպէս որ իրը թէ այն խօսովները նաւուն մէջ ներկայ ըլլային : Մեծ զրւարձութիւն պատճառեր էր անգղիական ազգային երգը God save the Queen. Տէր կեցո զրագուհին, զոր ճանապարհորդ ներէն մէկն երգեր է գործւոյն առջն, և ձայնը կերկերեր է եղեր բարձր ելլերով և լինցուցեր էր երգը խղդուկ ձայնով: Այն անխորհրդապահ գործին, որ ամեննեին գութ չունի, երբ անուակն սկսեր է դառնալ, կրկներ է այն կեր կերածայնութիւնն ամենայն ճշութեամբ: Եւ ամեն անգամ մոր սկսեր է երգել, նոյնպէս անփոփոխ կրկներ է այն պակասաւոր երգեցողութիւնն և 'ի ծաղր շարժեր է բոլոր հանդիսականները :

Թութակ մը խօսել տուեր են բերնին մօտ . ձայնագիր գործին կրկներ է անոր խօսքը . թութակը նորէն սկսեր է խօսիլ . գործին շարունակեր է, և այն երկու շաղակրատներուն շատախօսութիւնը ժամերով չէր գաղըրեր, թէ որ այբ ընդհատած չըլլային :

Լուիսոնի այս գեղեցիկ գիւտը գեռես պէտք ունի կատարելագործութեն, որպէս զի գոհացուցիչ կերպով կարելի ըլլայ օգուտ քաղել անկէ . նոյն խսկ գտնուած ներկայ վիճակին մէջ ալ շատ նշանաւոր է, և հիմակուրնէ կրնայ ըստով թէ ասով լուծուած կը համարուի այն եղական առաջարկութիւնն, որուն նպատակն էր անսահմանաբար պահել և արտադրել մարդու ձայնը : Հարկաւ պիտի գայ գործադրութեան ժամը, և ամենին ալ պիտի տեսնեն թէ ինչ բազմաթիւ և հետաքրքրական ծառայութիւններ պիտի մատուցանէ այս գործին :